

# **Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն**

**«ԱՍԷԴԼ» սահմանափակ պատասխանատվությամբ  
ընկերություն**

**31 դեկտեմբերի 2020թ.**

## Անկախ աուդիտորի եզրակացություն

«ԱՍԷԴԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միակ մասնակցին

### **Վերապահումով կարծիք**

Մենք աուդիտի ենք ենթարկել «ԱՍԷԴԼ» ՍՊԸ-ի (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով, բացառությամբ մեր եզրակացության «Վերապահումով կարծիքի հիմքեր» բաժնում նկարագրված հարցերի հնարավոր ազդեցության, կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են «ԱՍԷԴԼ» ՍՊԸ-ի՝ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

### **Վերապահումով կարծիքի հիմքեր**

1. Մենք նշանակվել ենք Ընկերության աուդիտոր 2021թ. հուլիսի 8-ին և այդ պատճառով չենք մասնակցել Ընկերության պաշարների տարեվերջի գույքագրմանը, որոնք ներկայացված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, համապատասխանաբար 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2,356,584 հազար դրամ, 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,931,473 հազար դրամ: Ընկերության պաշարների անվանացանկի մեծությամբ չվերլուծված մենք հնարավորություն չենք ունեցել այլ աուդիտորական ընթացակարգերի կիրառման միջոցով ձեռք բերել բավարար ապացույցներ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պաշարների առկայության վերաբերյալ:

Քանի որ պաշարների սկզբնական մնացորդները ներառվում են ֆինանսական արդյունքներում և դրամական հոսքերում, մենք չենք կարողացել որոշել 2020թ. դեկտեմբերի

31-ին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ներկայացված տարվա վնասի և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում ներկայացված գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցների ճշգրտման անհրաժեշտությունը:

2. Ինչպես նկարագրված է ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 11-ում, Ընկերությունն ունի փոխառություններ կապակցված կողմերից: Ղեկավարությունը երկարաժամկետ փոխառությունները ֆինանսական հաշվետվություններում դասակարգել է որպես ընթացիկ: Ընկերության ղեկավարությունը սկզբնապես չի ճանաչել փոխառությունները իրական արժեքով, ինչպես պահանջում է ՖՀՄՍ 9-ը՝ «*Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը*», քանի որ անհնար էր որոշել փոխառությունների մարման հնարավոր օրը և զեղչման տոկոսադրույքը նմանատիպ գործիքների համար: Մենք չենք կարողացել որոշել վերը նշված հարցի ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա: Հետևաբար, մենք չենք կարողացել պարզել, թե արդյոք եղել է ֆինանսական հաշվետվությունների ճշգրտման անհրաժեշտություն:

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

### **Հանգամանքի շեշտադրում**

Մենք Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 3.1-ի և 27-ի վրա, որոնք վերաբերում են Ընկերության կողմից ՖՀՄՍ կիրառումն առաջին անգամ հանգամանքին: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հանգամանքի առնչությամբ:

### **Այլ հանգամանք**

Ընկերության 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները աուդիտի չեն ենթարկվել: Հետևաբար մենք որևէ կարծիք չենք արտահայտում այդ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

## **Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար**

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Ընկերության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

## **Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար**

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազմեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար:


Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:

- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Ռուզաննա Բադայան

Տնօրեն/Առաջադրանքի պատասխանատու




25 օգոստոսի 2021թ.

ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն

## Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ

	Ծանոթ.	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (աուդիտ չարված)	2019թ. հունվարի 1-ի դրությամբ (աուդիտ չարված)
<i>Ակտիվներ</i>				
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>				
Հիմնական միջոցներ	4	2,684,376	1,978,694	1,486,441
Ոչ նյութական ակտիվներ		-	-	655
Հետաձգված հարկային ակտիվներ	5	11,890	-	-
		<u>2,696,266</u>	<u>1,978,694</u>	<u>1,487,096</u>
<i>Ընթացիկ ակտիվներ</i>				
Պաշարներ	6	2,356,584	1,931,473	2,010,556
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	7	590,141	573,270	590,823
Տրված փոխառություններ	8	210,752	165,497	130,991
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	9	103,639	237,688	21,767
		<u>3,261,116</u>	<u>2,907,928</u>	<u>2,754,137</u>
<b>Ընդամենը ակտիվներ</b>		<u><u>5,957,382</u></u>	<u><u>4,886,622</u></u>	<u><u>4,241,233</u></u>

# Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ

	Ծանոթ.	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (աուդիտ չարված)	2019թ. հունվարի 1-ի դրությամբ (աուդիտ չարված)
<i>Սեփական կապիտալ և պարտավորություններ</i>				
Կապիտալ և պահուստներ	10			
Կանոնադրական կապիտալ		502,350	402,350	402,350
Կուտակված շահույթ/(վնաս)		(144,037)	180,657	44,601
		<u>358,313</u>	<u>583,007</u>	<u>446,951</u>
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>				
Վարկեր և փոխառություններ	11	<u>270,208</u>	<u>36,375</u>	<u>2,936,686</u>
		<u>270,208</u>	<u>36,375</u>	<u>2,936,686</u>
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>				
Վարկեր և փոխառություններ	11	3,105,874	3,026,918	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	12	<u>2,222,987</u>	<u>1,240,322</u>	<u>857,596</u>
		<u>5,328,861</u>	<u>4,267,240</u>	<u>857,596</u>
<b>Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ</b>		<u><u>5,957,382</u></u>	<u><u>4,886,622</u></u>	<u><u>4,241,233</u></u>

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2021թ. օգոստոսի 25-ին:

Էդուարդ Ազիկյան  
Տնօրեն




Աշոտ Ենգիբարյան  
Ֆինանսական տնօրեն



Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 40-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար դրամ		2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (աուդիտ չարված)
	Ծանոթ.		
Հասույթ	13	4,526,080	4,145,604
Վաճառքի ինքնարժեք	14	(3,960,747)	(3,686,823)
Համախառն շահույթ		565,333	458,781
Այլ եկամուտ		10,154	175
Իրացման ծախսեր	15	(57,512)	(48,507)
Վարչական ծախսեր	16	(281,365)	(267,799)
Այլ ծախսեր	17	(86,065)	(1,797)
Գործառնական գործունեությունից շահույթ		150,554	140,853
Ֆինանսական եկամուտ		12	2
Ֆինանսական ծախսեր		(11,328)	(8,844)
Այլ ֆինանսական արդյունքներ	18	(437,829)	35,129
Շահույթ/(վնաս) մինչև հարկերը		(298,591)	167,140
Շահութահարկի գծով ծախս	19	(26,103)	(31,084)
Տարվա շահույթ/(վնաս)		(324,694)	136,056
<i>Այլ համապարփակ ֆինանսական արդյունք</i>		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		(324,694)	136,056

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 40-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: